



ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«Ղ» դեկտեմբերի 2013 թ.

N257/Ս

ք. Ստեփանակերտ

2013-2014 ուստարում ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի անցկացման մասին

Հանրակրթական առարկաների նկատմամբ հատուկ կարողություններ ունեցող և առանձին հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ սովորողների շրջանում հետաքրքրություն առաջացնելու նպատակով

հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2013-2014 ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադան կազմակերպել ու անցկացնել 3 փուլով՝ ներքոբերյալ առարկաների գծով.

- հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, օտար լեզու /անգլերեն, գերմաներեն/, պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա և նախնական զինվորական պատրաստություն.

- դպրոցական՝ 1-ին փուլ - 2014թ.հունվարի 20-31-ը
 - շրջանային /քաղաքային/՝ 2-րդ փուլ - 2014թ. փետրվարի 12-14-ը
 - հանրապետական՝ 3-րդ փուլ - 2014թ.փետրվարի 24-ից մարտի 15-ը,
- Ստեփ. հ.2 հիմնական դպրոցում:

Օլիմպիադայի շրջանային /քաղաքային/ փուլին միևնույն դպրոցականին 3 առարկայից մասնակցելու հնարավորություն տալու նպատակով 2-րդ փուլը կանցկացվի հետևյալ ժամանակացույցով:

- *հայ գրականություն, հայոց եկեղեցու պատմություն, օտար լեզու, ֆիզիկա, ինֆորմատիկա առարկաների օլիմպիադաներն անցկացնել փետրվարի 12-ին.*

- *հայոց լեզու, մաթեմատիկա, քիմիա, նախնական զինվորական պատրաստություն առարկաների օլիմպիադաներն անցկացնել փետրվարի 13-ին:*

- *ռուսաց լեզու, պատմություն, աշխարհագրություն, կենսաբանություն առարկաների օլիմպիադաներն անցկացնել փետրվարի 14-ին:*

2. Օլիմպիադաների կազմակերպման ու անցկացման համար ստեղծել կազմկոմիտե՝ հետևյալ կազմով.

- Համբարձումյան Մ. - ԼՂՀ ԿԳ փոխնախարար, կազմկոմիտեի նախագահ
- Մուսայելյան Ռ. - ԼՂՀ կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ ԿԳ վարչության պետ, կազմկոմիտեի նախագահի տեղակալ
- Արզումանյան Ս. - նախարարության կրթության պետական տեսչության պետ
- Բոզիյան Ռ. - ԿԳ վարչության հանրակրթության բաժնի վարիչ
- Մարգարյան Կ. - Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ

- Բաղունց Մ. - նախարարության ֆինանսատնտեսական բաժնի վարիչ
Թևոսյան Մ. - նախարարության տնտեսվար
Մարտիրոսյան Լ. - Ստեփանակերտի №2 հիմնական դպրոցի տնօրեն

3. Նախարարության կրթության և գիտության վարչությանը, կրթության պետական տեսչությանը՝

ա/ նախապատրաստել ԼՂՀ դպրոցականների հանրապետական օլիմպիադայի շրջանային /քաղաքային/ 2-րդ փուլի անցկացման առաջադրանքները՝ ժամկետը մինչև փետրվարի 1-ը.

բ/ Լրատվական միջոցներով, «Լուսարար» պաշտոնաթերթի էջերում լուսաբանել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների նախապատրաստման ընթացքն ու արդյունքները.

գ/ «ԼՂՀ դպրոցականների 2013-2014 ուստարվա հանրապետական օլիմպիադայի արդյունքների մասին» հարցը ներկայացնել նախարարին կից խորհրդակցության քննարկմանը:

4. Ընդունել ի գիտություն, որ՝

ա/ օլիմպիադայի 1-ին փուլի առաջադրանքները կազմվում են ԼՂՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինների /այսուհետ՝ կրթության բաժիններ/ առարկայական մեթոդխորհուրդների կողմից՝ հանրակրթական դպրոցների առարկայական մեթոդխորհուրդների առաջարկությունների հիման վրա.

բ/ օլիմպիադայի 2-րդ փուլի առաջադրանքները կազմվում են նախարարության մասնագետների կողմից.

գ/ օլիմպիադայի հանրապետական 3-րդ փուլն անց է կացվում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմված մարզային փուլի առաջադրանքներով /ժամանակացույցը և ըստ առարկաների հանրապետական փուլի մասնակիցների սահմանված թվաքանակի տեղեկությունները կցվում են՝ համաձայն հավելված 1 և 2/.

դ/ ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական 3-րդ փուլում հաղթող ճանաչված դպրոցականները և նրանց դասավանդող ուսուցիչները համապատասխանաբար կպարգևատրվեն նախարարության դիպլոմներով, գովասանագրերով, պատվոգրերով և դրամական պարգևներով.

ե/ օլիմպիադայի 3-րդ փուլի հաղթողները կմասնակցեն ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլին:

5. Կրթության բաժինների վարիչներին՝

սահմանված ժամկետներում կազմակերպել ու անցկացնել օլիմպիադայի դպրոցական և շրջանային /քաղաքային/ փուլերը և մինչև 2014թ. փետրվարի 20-ը նախարարության ԿԳ վարչություն ներկայացնել շրջանային /քաղաքային/ փուլում հաղթող ճանաչված ու հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցականների ցուցակներն ըստ առարկաների, ինչպես նաև մանրամասն հաշվետվություն ըստ պահանջվող ձևի:

6. Նախարարության ֆինանսատնտեսական բաժնի վարիչին՝

ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի կազմակերպման, ինչպես նաև օլիմպիական թիմերի ՀՀ տարբեր քաղաքներում կայանալիք ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաներին մասնակցությունն ապահովելու համար պահանջվող ժամկետներում կազմել ծախսերի նախահաշիվներն ու ներկայացնել հաստատման:

7. Ընդհանուր բաժնին՝

սույն հրամանի բովանդակությունը տեղեկացնել նախարարության պատասխանատու աշխատողներին և կրթության բաժինների վարիչներին:

8. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարության ԿԳ վարչության պետ Ռ. Մուսայեվյանին:



Ս.ԱՍՐՅԱՆ